ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

N02/Ղ.1/5178-17 "01" 09. 2017 թ.

«Զանգակ-97» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 00830786) տնօրեն
պրն Ս. Մկրտչյանին
հասցեն՝ ք. Երևան, Նոր-Նորքի 8-րդ զանգված, 30 շ.,
բն. 39, հեռ.՝ 23-25-28,
էլ. հասցեն՝ maya.shahumyan@zangak.am

Հարգելի պարոն Մկրտչյան

Համաձայն 2016 թ. ապրիլի 1-ին ՀՀ մշակույթի նախարարության և «Զանգակ-97» ՍՊԸ-ի միջև հեղինակային և հարակից իրավունքի հիմքով կնքված «ՀՀՄՆՄԾԻԳ-ԲԸԱՀԱՇՁԲ-16/39» ծածկագրով հրատարակման աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի Ձեր ընկերության կողմից պետք է կատարվեին Համլետ Պետրոսյանի «Արցախի Տիգրանակերտը» գրքի (այնուհետ՝ գիրք) հրատարակման աշխատանքները (պայմանագրի ընդհանուր արժեքը՝ 3 000 000 ՀՀ դրամ):

Հաշվի առնելով, որ նշված գրքի հրատարակումը հեղինակային իրավունքի առարկա է և հեղինակը օգտվելով «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով իրեն վերապահված հետկանչի իրավունքներից (համաձայն որի՝ հեղինակին են պատկանում

0010 Երևան Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, հեռ. Тел. Tel. (010, 011) 52 93 49, ֆաքս факс fax (374 11) 52 39 22,
0010, Ереван, ул. Вазгена Саргсяна 3, Дом правительства 2, Government House 2, Vazgen Sargsyan str. 3, Yerevan 0010
Էլ-փոստ Эл.почта/E-mail: info@mincult.am, www.mincult.am

ստեղծագործությունը հրապարակելու մասին նախկինում ընդունած որոշումից հրաժարվելու՝ հետևանքի իրավունքը՝ որպես անօտարելի և անփոխանցելի անձնական ոչ գույքային իրավունք) հրաժարվել է գրքի հրատարակման համար տրված համաձայնությունից՝ Ձեր ընկերությունը չի կարող ժամանակին և պատշաճ իրականացնել պայմանագրով նախատեսված պարտավորությունները:

Հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրի 2.1.3 և 7.2 կետերը ՀՀ մշակույթի նախարարությունը 2017թ. օգոստոսի 23-ից միակողմանի ամբողջությամբ լուծել է 01.04.2016թ. կնքված «ՀՀՄՆՄԾԻԳ-ԲԸԱՀԱՇՁԲ-16/39» ծածկագրով գնման պայմանագիրը:

Տեղեկացնենք նաև, որ սույն ծանուցումը ստանալուց հետո դուք պարտավոր եք 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական բաժանմունքի 900005570115 հաշվեհամարին փոխանցել գրքի հրատարակման աշխատանքների համար հատկացված 3 000 000 (երեք միլիոն) ՀՀ դրամը՝ պարտադիր նշելով կնքման տարեթիվը և պայմանագրի ծածկագիրը, իսկ ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական բաժանմունքի 900005028106 հաշվեհամարին՝ պայմանագրի 5.2 կետի համաձայն՝ 15 000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ տուգանքը և 5.3 կետի համաձայն՝ 444 000 (չորս հարյուր քառասունչորս հազար) ՀՀ դրամ տույժը:

Հարգանքով՝ Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Գործերի կառավարման վարչություն
Կատարող՝ Տ. Լուքիասյան
Հեռ.՝ 011 58 51 78

0010, Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Tel. (010, 011) 52 93 49, Ֆաքս факс (374 11) 52 39 22
0010, Ереван, ул. Вазгена Саргсяна 3, Дом правительства 2, Government House 2, Vazgen Sargsyan str. 3, Yerevan 0010,
Էլ-փոստ Эл.почта/E-mail: info@mincult.am, www.mincult.am